

12 Բաղիս 89

... խմբագիր,

Ազգ. Հիւանդանոցի մարտ ամսոյ մէջ նուէր շնորհող Մեծ. անձանց ցանկը Ձեր մեծապատուութեան զրկելով անոր հրատարակութիւնը կը խնդրէ հոգաբարձութիւնս, և պարտք կը համարի յիշեալ հաստատութեան մէջ պատասխարկող զգացած խորին երախտագիտութիւնն յայտնել հրապարակաւ և անոնց կողմանէ շնորհակալ ըլլալ անոնց՝ որք մարդասիրական զգացմամբ հաճեր են մխիթարել զանոնք առատ նուիրօք:

Ղուրմէ
Նախորդ. հրատարակութեան
գումարը 34,478 40

Մեծապատիւ Էֆէնտիք	
Մ. Կարապետ Գարագաշեան	44 30
Գ. Կ. Տէր Յովհաննէսեան	23 20
Յարութիւն Սարափեան	40
Համբարձում Յարութիւնեան	44 30
Աւետիս տէր Ստեփանեան	23 20
Խ. Պաքաշեան	23 20
Յակոբ Մկրտիչեան	47
Կարապետ Եպիփանեան	44 30
Ղուկաս Սերափեան	44 30
Մկրտիչ Պողոսեան	44 30
Գէորգ Մարտիրոսեան	23 20
Խաչիկ Օտեան	420
Յովհաննէս Խորասանեան	405
Ստեփան Թադևորեան	60
Մ. Կարապետ և Մ. Մկրտիչ Մալկարեան	47
Յարութիւն Կիւմիւշկէտեան՝ ան	60
Ստեփան և Կարապետ Սերոբեան	47
Մարտիրոս Մէստեան	30
Անդրանիկ Պետրոսեան	30
Գէորգ Տէպեան	42
Կարապետ Խումարեան	240
Յուսիկ Սարափեան	420
Յակոբ Բախտիկեան	23 20
Սարգիս Բարազեան	23 20
Մարգար և Կարապետ Բնիկեք	23 20
Յարութիւն և Կարապետ Զաքէեան	23 20
Նիկողոս Պէշեքեան	44 30
Յովհաննէս Քաւառեան	30
Մանուկ Գուրուսեան	30
Կարապետ Ամասեան	44 30
Գէորգ Յ. Քէմհանեան	45
Ե. Ճէնազեան	23 20
Գառնիկ Նիկողոսեան	23 20
Ասատուր Ֆրէնկեան և Եղբարք	
Յ. Թօփ ալաճա	415
Յովհաննէս Ճէվահիրեան	
1 Թօփ հարէ	42
Գրիգոր Գազանեան 1 Թօփ շալ	42
Մ. Յակոբ Պողոսեան 22 երոյ. շալ	33
Շնորհք Տալուտեան 40 կանգուն	
քանալա	57 20
Մէրկէր Ճիվէլէկեան 24 կանգուն	
քանալա	40 20
Յարութիւն Կարապետեան 1 Թօփ պասմա	74 20
Նաղարէթ Մուրաթեան 1 Թօփ պասմա	92
Մարտիրոս և Յովհաննէս Բնիկեք կէս թոր ամէրիգան	40
Աթանիկ Հալէպեան 6 հատ ետղմա	24
Մ. Մարտիրոս Պ. Գալֆաեան 36 ետրտայ քանալա	80
Աւետիս Կիւմիւշեան 2 Թօփ սարկըյու	80
Գրիգոր Ղարիպեան 1 Թօփ ամէրիգան	55
Գառնիկ Քաղապեան 200 կանգուն ուշիւր	30
Յովհաննէս Պէկեան 5 ետղմա 20 թիւպէնա	55

Յ. Ճ. Գազալ 1 Երեւանի թիւրէ մարտար	48
Ռուբէն Լօքմակէօզեան 6 հատ թիւրէ մարտար	42
Գէորգ Սարափեան 20 քաշ միս	160
Մարտիկ Փիլիպոսեան 25 քաշ թիւր	75
Սիմոնիկ Մանուէլեան 3 ֆըշի չի-մէնթօ	420
Յ. Ճ. Գազալ	44 30
Ռուբէն Լօքմակէօզեան	23 20
Մ. Սահակեան և Յ. Աւետիսեան	23 20
Գառնիկ մը բարեհաճ ազգայիններէ	23 20
Եղիա Պէյլէրեան	420
Մ. Աւետիս Մկրտիչեան	23
Մ. Յօհան Կալա	23
Ռուսիացի բարեհաճ ազգային մը	240
	37,532 40
Շարունակելի	
Ի դիմաց Հոգ. Հիւանդանոցի	
Ատենադպիր Ատենապետ	
Տ. Իւթիւսեան Գ. Զարդարեան	

Մեղու Հայաստանի տէր Եֆէնտիքի մէքթուկ օգուճմուշ տուր:

Հին ՆԱԽԻՉԵՆԱՆ
(Թղթակցութիւն Մեղու Հայաստանի լրագրի)

Եթէ մենք ամառ ժամանակ մի հայեացք ձգենք Նախիվեանի շուրջը գտնուած լեռների վերայ, բնական զանաւոր աշխարհային միակ բնութեան պարզեւ, որ մեզ ամենիս տարուայ այս ժամանակամիջոցում զուարթացնող ու կենք պարզեւորէ է: Բնութեան այդ միակ պարզեւ է բուսականութիւնը, որից դժբաղդաբար զուրկ են Նախիվեանի շուրջը գտնուած լեռները: Նոցա վերայ փոխանակ կանաչ խոտեր և օճեր, որք ամառնային տօթի ժամանակ սողում են ջերմ քարերի ու աւաղի վերայով: Նոցա վերայ չքան անտառներ՝ որք մեծ դեր են խաղում կլիմայի վերաբերութեամբ: Լեռների բուսականութիւնից զուրկ լինելը պատճառ է դառնում ինչպէս յայտնի է օդի անմաքրութեան. օդի անմաքրութիւնից յառաջանում են ի հարկէ զանազան տեսակ հիւանդութիւններ:

Ամառ ժամանակ Նախիվեանում առ հասարակ տիրապետող սովորական հիւանդութիւններն են ա) աչքացաւ և բ) տենդ. այնպէս որ տըքայտի կամ տենդի ազդեցութիւնից ազատ վրդները բացառութիւն կազմողների շարքը կտրելի է դասել: Բայց Նախիվեանում աչքացաւը կախում ունի և մի զօրաւոր պատճառից: Նախիվեանի ժողովուրդը իր երկրի բերքերից շատ սիրում է սեխը (եմիշ կամ խորբուզակ), որ ինչպէս յայտնի է առաջացում է աչքացաւ, նոյնպէս և այլ հիւանդութիւններ, մանաւանդ Նախիվեանի նըման քաղաքում, ուր կլիման շատ ջերմ է:

Նախիվեանի բաղնիքը նոյնպէս իր կողմից պակաս հիւանդութիւններ չէ առաջացնում: Նախիվեանից երկու շաբաթ կամ երեք շաբաթ մի անգամ յաճախում է բաղնիք, բայց նա մտնելով բաղնիք կատարեալ առողջ, դուրս է գալիս այնտեղից բուրբոն հիւանդ. կարճ միջոցում նորա մարմինը ծածկվում է բշտիկներով ու ստիպում է նորան քանի մի շաբաթ պարկել տանը և դադարել աշխատելուց:

Ահա՛ թէ ինչպէս է պատահում այդ բշտիկների երևան դուրս գալը: Նախիվեանից մտնելով բաղնիք լուացվում է այնպիսի մի առաջանում, որի շուրջը փոխվում է ամիսը մի անգամ: Դուրս գալով նա առաջանից տեսնում է քանի մի ցիւր և ցան եղած թուրք վարտարներ, որոնցից մի քանիսը ածելին ձեռին կնդում են քանի մի մուսուլմանների գագաթները, իսկ միւսները մի ուրիշ անկիւնում կամ պուճոխում պարապած են մի ուրիշ գործով. զօր. նոցանից մինը մի այնպիսի օդ է կայրել մինի շինքակօթին, որ Աստուած ազատէ, միսը մէկ մատի հաստութեամբ է բարձրացրել. միւսը արդէն մի ուրիշ նոյնպէս շինքից, թեւից, և կամ լեզուի տակից մի աման արիւն հաւաքելուց յետոյ աշխատում է արիւնը դադարեցնել, դնում է կտուրած վերքի վերայ արէթ, բամբակ և հեռանում է մի ուրիշի մօտ, որին նա խօսակցել էր: Այսպէս շինքը արիւնն աւարդ գնում մտնում է աւաղանը, որից յետոյ և մտնում է շատ անգամ բաղնիք գնացող առողջ մարդը, լողանում է նա այն միւսնոյն ջրում, որում լողացում է թէ շինքը արիւնն աւարդ, թէ գլուխ կնտածը և թէ զանազան տեսակ վնասակար վէրքեր ու նեցողք: Սոցա հետ յիշելու է և այն, որ թուրքերը գնալով բաղնիք՝ մընում են այնտեղ համարեայ չորս հինգ ժամ և այդքան երկար միջոցում նոքա սկսում են ծխել իրանց երկայն չիւրուխներից, շատերը նոցանից ճաշում են նոյն իսկ բաղնիքում. ուտում են այնտեղ ամեն տեսակ մրգեղէն, ինչպէս զօր. սեխ, ձմերուկ, խաղող և այլն: Բաւական չէ բաղնիքի դարձելի հոգը, նորեկը հանդիպում է մի այնպիսի գարշելի ու ապականուած օդի, որոյ նմանը երևակայել անգամ չէ կարելի: Պէտք է աւելացնել, որ թուրքերը ունին սովորութիւն գաղտնաբար իւրեանց մեռեալներին լուանալ բաղնիքներում: Այսպիսի տեղից մի թէ կարող է մարդ ազատուել ապագայում առանց մի որ և իցէ հիւանդութիւն ստանալու: Եւ ահա՛ իսկ այս է պատճառը. որ Նախիվեանից հայ բնակիչը ըստ մեծի մասին լողանում են տանը առանձին պատրաստած կօշուրով:

Նախիվեանից մամուռ ժամանակ քընում են կտուրների վերայ, որովհետեւ տան մէջ տիրապետող անտանելի չորք և մոծակները շատ նեղացնում ու անհանգիստ են անում նոցա: Տան մէջ եղած չորքից և մոծակից ազատուելով հանդիպում են նոքա կարիճներին, որոնց վերապաշտը են անուանում:

Այսպեղի կարիճները երեք տեսակ են լինում. Ա. սպիտակ, Բ. դեղին և Գ. սև, եթէ պատահում է որ սպիտակ կարիճը խայթում է կտրան վերայ քընածներից մինին, բռնվում են քսելով մաճուն կծած տեղի վերայ, մաճուն քսելուց յետոյ մի փոքր ժամանակ միայն ցաւը շարունակվում է և ապա դադարում ու վերքը լուանում: Եթէ կծեց դեղինը, բռնվում են մաճուն քսելով, միայն սորա կծածը մի փոքր երկար է տեւում և շատ անգամ տանջում է ամբողջ գիշերը, նայելով թէ կարիճը ինչ տեսակ է խայթել:

Վերջապէս երրորդ տեսակի այսինքն սև կարիճի կծածի առաջը ոչնչով չեն կարողանում առնել, նա իսկոյն մահ է պատճառում, եթէ իսկոյն չհասան բռնի օգնութեանը: Բայց բարեբաղ-

դաբար սև կարիճներ թէ տներին մէջ և թէ տանեաց վերայ շատ հազուադէպ են, նոքա շատ տարածուած են թուրքաց գերեզմանատան մէջ:

Չնայելով որ այս տեղ կայ մի քաղաքական դեղաբան մի հասարակաց հիւանդանոց և չորս հատ էլ բժիշկ, այնու ամենայնիւ բնակիչները կտրելի է ասել, որ ոչ մի առանձին նշանակութիւն չեն տալիս նոցա, հիւանդանոց գնացողներ ըստ մեծի մասին են զինուորներ, աստիճանաւորներ և առհասարակ ամէն տեսակ տէրութեան պաշտօնատար անձինք ու պանդուխտներ: Նախիվեանից ունեն իրանց համար առանձին թուրք կանայք և այլ մարդիկ, որք բռնում են Եւրոպական բժիշկների տեղը Նախիվեանում, իսկ այդ տեսակ բժշկութիւնների և բժիշկների դեղաբանը իրանց գրպանն է, որ տեղ կտրելի է գտնել դեղորէից համար զանազան իրեր, ինչպէս զօր. ձու դարիչին, ածուխ, խոնկ, նուան կեղև և այլն:

Եթէ մինը հիւանդացաւ մի որ և ինչէ հիւանդութեամբ, իսկոյն կանչում են թուրք կնոյ, որ գալով նստում է հիւանդի մօտ, բռնում է նորա մաջէն, սկսում է քաշակերել հիւանդին քանի մի զանազան տեսակ փաղաքական խօսքերով և այդ փաղաքական խօսքերից յետոյ չէ կշտանում իր վրայ մի երկար գովասանք կարդալուց, այլ և անիծում ու պարսաւում է իր ազգից իւր նման քանի մի կանանց նոցա տգէտ իսկ իրան հմուտ անուանելով, որով նա գրաւում է թէ հիւանդի և թէ նորա ծնողաց սէրը առ ինքն: Սորանից յետոյ նա բաց է անում իր կախարդական գրպանը, հանում է այն տեղից, ինչպէս ասացի, զանազան տեսակ իրեր իւր դեղորէից համար ու սկսում է ծածուկ կերպիւ, պատրաստել դեղը, մի քանի ըրպէից յետոյ վեր է առնում նա պատրաստած դեղը և մի քանի պատուէրներ կարդալով ասլիս է հիւանդի տիրոջ իսկ ինքը մի փոքր դիւթական և քաշակերական խօսակցութիւնից յետոյ հեռանում է:

Մի անգամ ես տեսայ մի տոճիկի, որ հրաւիրված էր մի հայի տանը նորա գերեզմանին անդամներից մինի աչքացաւը բժշկելու:

Ահա՛ թէ ինչպէս վարուեց այն տեղ թուրք բժիշկը. նա հանեց գըրպանից մի սպիտակ բան, որ ինչ շատ հետաքրքրեց ու ստիպեց ինչ աղամայ այս հարցը տալ տաճիկին թէ «բու նա դըր» (այս ինչ բան է), նա իմ հարցից ըստ թէ և մի փոքր չլիթութեամբ, բայց իսկոյն ուշքի գալով պատասխանեց. «Չայլամ լիմուրդաւ դըր» (Չայլամի ձու է): Իսկոյն, նա սկսաւ իր դեղի պատրաստութիւնը տեսնել և մի փոքր ժամանակից յետոյ բաց արաւ հիւանդի աչքը, ածեց այնտեղ փաշտարած լայլամի ձու ու այսպէս վերջացրեց իւր բժշկութիւնը:

Մի քանի շաբաթից յետոյ ինչպէս լսեցի աչքացաւով բռնուած մարդը թուրք բժիշկի հմտութեամբ բուրբոնի կորցրել է աչքի տեսութիւնը:

Դ. Տէր Սարգիսեան

ՍԱՀԻԳ ՂԱՋԷՔԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ

Գալթատա Բէնճէյ մայիս բազարընա
Ն. 29 իստի խանութ